

1890

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՌԴԻՒՄԱՐԱՆ

ՀԱՅՈՐ ԽԵ ՀԱՅՈՐ ԽԵ

ՀԱՅԿԱԿԱՆ Փ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՎՃԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ

ԵՒ

ՆՈՐԱ ԵՐԿԱԾԻՐՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՑ



ԿԸԵԼ են արդէն այս մեծափառ հայրապետիս անունն և անզուգական ճառերն վերջին ժամանակներու դրաւել եւրոպացի հայերենագիտաց խորին ուշադրութիւնը, Պա- ղաւիսոնի համալսարանի արևելեան լեզուաց ուսուցիչը, Պրօֆէսսօր էմիլիոս Տէզա, որ գեղեցիկ դպրութեանց և բազմաթիւ լեզուաց հետ ՚ի միասին՝ հետամուտ է ե հայերենի՝ դա- սական և աշխարհաբար լեզուաց ուսումնասիրութեանը, մանաւանդ- թէ զանոնք լաւագոյն կերպով հասկացող և մշակող հայերենագի- տաց մին է, կը գրէր ինձ ամսօք յառաջ, թէ Մանդակունեց ձա- սերեն մին, զորանամբողջապէս իտալերէն թարգմանել է, կարգա- լով ակադեմական ակըմքի մի դիմաց՝ ամէնքը զարմացել են: Ուս- տի նա հետամուտ է շուտով հրատարակել, թէ մեզ և թէ Եւրո- պայի ուսումնասիրաց համար մեծ նշանակութիւն ունեցող այդ գոր- ծըն, բայց իւր կողմանէ միանգամայն փափագ կը յայտնէր, որ հրատարակութեան դեռ ձեռք չզարկած, ես զրով իմ տեսութիւն- ներս յայտնեմ նոցա մասին: Թէպէտ և ուրիշ մերձաւոր զրադանաց պատճռուա՛ ես չկարացի այն ժամանակ աղնիւ բարեկամիս ցանկա-

ցածը կատարել, բայց այժմ նորա հրաւերքն և մեծ հայրապետիս վրայ ունեցած մեծագոյն համակրանչքը՝ կը փութացընեն զիսի դործ. և կարծեմ թէ ըստ առածին՝ Լաւ և անազանը՝ քան երրէք.

Յովիչ. Մանդակունի՝ երկրորդ կամ կրտսեր թարգմանչաց գլաւէն եղած կը կարծուի. բայց այս յայտ է, թէ քան զշազար և զՄամբրէ աւագագոյն էր տիգը և աղնուատոհմութեամբն, և զրիթէ Մովսիսի հասակակից. ինչպէս միւս թարգմանչաց՝ այսպէս և սորա մասին՝ մեր պատմագրաց աւանդածն գրիթէ ոչինչ է. Սակայն հետևեալ իրողութիւնն՝ ինձ աւելի զարմանալի կ'երեսի. այսինքն է, մեր հայրենեաց և կրօնիք համար ընդգէմ թաղկերտի համախմբուած՝ ոչ Արտաշատու ժողովականաց և ոչ իսկ աշխարհօրէն պատերազմին գործակցող նշանաւոր ուխտապահաց մէջ յիշուած է բնաւ նորա անունն. մինչդեռ Սահակ և Փարսման զոյդ Մանդակունիք, գուցէ քան զնա կրտսերագոյնք, կը փայլէն՝ ի թիւս վարդանանց քանչց, Հայաստանի փրկութեան և կրօնական ազատութեան մեծագոյն գործը կատարելու համար. Արդ, կարելի՞ է աստի եղրակացնել, թէ 451—453 Յովիչան դեռ ոչ քահանայական աստիճանին հասած էր, թ ոչ իսկ իրբն տոհմիկ ոք՝ նշանաւոր զիրք մի առացած է կարծեմ թէ ոչ եւ յիրաւի, կորիւն՝ ի վերջ կոյս Գատւնագրութեան Ս. Մեսրովիայ, որ գրուած կը կարծուի 445—450, յետ գոցելոյ զվարագոյր տիսուր մահուան ամուլակից և զուգափայլ վարդապետացն իւրոց, անդէն և անդ խօսքը նոցա աշակերտաց վերայ դարձնելով՝ այսպէս կ'ըսէ. «Իւ զնորին աշակերտ Թագիկ անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն, Հանդերձ եղբարք երանութեան հասելոց՝ ասպասաւոր սրբոցն՝ ի փառս Աստուծոյ կարգէին, և զիսաւորս վերակացու տեղապահն յայտ արարեալ Հարցն կատարելոց (այսինքն է Սահակայ և Մեսրովիայ) որոց առաջինն՝ Յովսէկի զիսաւոր ժողովոյն. և երկրորդն՝ պլլ աշակերտ Յովինան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր և ձշմարտապառում. Մրում դէպ լինէր յես վախճանի սրբոյն (Յովսէփայ), բազում ազգի ազգի փորձորեանց և կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկյալական բանութեանն՝ ի Տիգրոն քաղաքի. վասն որոյ և զիսաւորվանողական անուն ժառանգեաց. ի նոյն վերակացուրիւն դասնայր յերկիրն Հայոց ».

Արդ առ կորեան յիշուած Յովսէփն՝ անտարակոյս է կալծողիկու սըն կամ լաւ ևս տեղապահն կամթողիկոսական ամոռուոյն, գոր Մ. Խորենացին, Պատմ. Հայոց Գ. զլ. կէ, Վայոցձորեցի կ'անուանէ, 'ի խոզոցիմ գեղջէ. իսկ Յովիչանի անուամբ՝ կարելի է հասկանալ թէ Եկեղեցացին և թէ Մանդակունին, թէ պէտ և ես աւելի կ'ախորդէի բացարձակապէս վերջինն եղած համարել, եթէ ժամանակագրական

գժուարութիւնք ինձ ընդ առաջ չելլէին : Եւ յիրաւի , նախ գիտելու ենք , որ կորեան այս վերջի խօսքերս , այսինքն է , Յովհաննու երրոն 'ի Տիգրոն , խոստովանողական անորն ժառանգելն , և ի Աոյն վերակացորդիշն¹ , այսինքն է , եպիսկոպոսական վարչութիւն աշխարհիս Հայոց վերադառնալն՝ բացառութեամբ միայն Յովհան Մանդակունույն կը յարմարին . այնու զի Ղազարայ հետ ուրիշ վկայութիւնք ևս կը հաստատեն վերոյիշեալ կրկին և պատմական եղելութիւնքն . իսկ Յովհ . Եկեղեցացւյ մասին՝ ոչ կորիւն և ոչ այլ ոք աւնադած է երրէք այսպիսի ինչ . Բ . Օրինուրինամբեր ցուցակի հեղինակն , եթէ ստուգի Մովսէս ոմն է , ատենադպիր Ս . Սահակայ , և եթէ այդ կարգաւորութիւնն եղած է իրգք առ Կենդանութեամբ և հրամանաւ մեծի հայրապետին , ինչպէս որ կ'աւանդուի անդ , այնուհետեւ պէտք է ասել , թէ Յովհ . Մանդակունին՝ այս ժամանակամիջոցիս արգէն իսկ քահանայ եղած և Հայաստաննեայց Եկեղեցւոյ նախկին կարգաւորութեան մէջ իսկ մասնակցող մեծանուն գործիչներէն մին էր , որովհետեւ այդ յիշատակարանի մէջ նշանաւոր թարգմանչաց ձեռագով եղած կարգաւորութեան մէջ Մանդակուննեցւոյ գործն ևս յանուանէ կը յիշուի : Ուրեմն նոյնը կարող էր նաև 454 – 458 ին առանձին գաւառոի մի վերակացութիւնն ստոհնանած լինել և մեծապէս առարինացած : Գ . Ստեփանոս Սիւնեցին՝ Պատմ . Սիւնեաց գլ . Ժե . Խօսելով Սիւնեաց մետրապօլիտն՝ Անանիայի մասին՝ կ'ըսէ . և Գնաց 'ի ժողովն Շահապիվանի , ուր էր և Յովհան Մանդակունի , և արարին կանոնն ա . Արդ . Շահապիվանի Ա . Ժողովն եղաւ Ս . Սահակայ մահուանէն 7 – 8 տարի վերջ , այսինքն է , 446 – 448 ին . իսկ Երկրորդ ժողովն՝ յամի Ցեառն 454 – 455 : Ուրեմն Ստեփանոսի վըկայութիւնն՝ եթէ կորեան 'ի վեր անզր մէջ բերուած տեղույն վրայ հաստատուած համարինք , և եթէ մի ուրիշ հնագոյն և ստոյգ յաղբերէ առնուած , կը ցուցանէ մեզ , թէ Մանդակունին՝ կամ կարող էր գտնուիլ և իրգք գտնուեցաւ նաև Արտաշատու ժողովական բարձրաստիճան եկեղեցականաց կարգին մէջ , որոց ամենուն անուանքը թէպէտ և մի առ մի թուած չեն Ղազար և Եղիշէ , սակայն այլոց բազմաց անուամբ կը հասկացուին . և կամ ըսել , թէ ձանձրանալով նայանառակ գնացից ժամանակացան՝ առանձնացել էր 'ի վանս և յանապատս՝ Հայաստանի բարոյական աղէտքն ողբալու համար :

1. Այսինքն է , եթէ վերակացորդին բառով կաթողիկոսութիւն հասկանանք , գէմ ընդ գէմ պատմապատմ մի կը ծագի Կորեան այս աւանդութեան և իւր պատմագրութեան թուականին մէջ . որովհետեւ Ս . Մեսրովրա պատմութիւնը՝ 448 – 450 դրուած կը կարծուի , իսկ Մանդակունին , ընդհակառակն , շատ տարիներ վերջ կաթողիկու եղաւ և 'ի Տիգրոն գնաց : Ուստի հարկ կը լինի ըսել , թէ կամ կորիւն այս թուականս շատ տարիներ վերջ գրած լինի իւր գործն . և կամ , ընդհակառակն , վերոյիշեալ տեղին՝ յետոյ ուրեմն կորեան երկասիրութեանը մէջ ներմուծուած է :

Մանդակունին՝ ծնած էր Արշարունեաց կամ Արշամունեաց ծախևոտ՝ զիւղում: Ղազ. Փարպեցին՝ առ վահան Մամիկոնեան դրած թղթոյն մէջ կը ծանուցանէ մեզ, թէ Յովհ. Մանդակունի էր եղօրորդի մեծանուն կաթողիկոսին Գիւտի կամ Գտայ, որուն և արժանաւոր յաջորդ լինելու համանման բարեմասնութեամբ իսկ ճախացած էր: Այ ոք՝ ի հին մատենազրաց մերոց նշանակած է որոշակի Յովհաննու ծննդեան ճիշդ թուականն, որով զիւրին պիտի լինէր որոշել նաև նորա կաթողիկոսընտրութեան և մահուան տարեթիքն. ուստի հարկ կը լինի վերջին թուականաց ձեռքով, որոնք համեմատութեամբ՝ մեզի աւելի մերձաւոր եղելութիւններ կը համարուին, որոշել առաջին կէտք: Սակայն ով չի տեսներ նաև այն մեծ շփոթութիւնն, որ կը տիրէ տոհմային պատմազրաց մէջ ևս և նորա կաթողիկոսընտրութեան և մահուան մասին աւանդած թուականներուն վրայ. այսինքն է, հինք զրեթէ առհասարակ կը դնեն զիովհ. Մանդակունին՝ իրբե անմիջական յաջորդ Գտայ, և գիւտ՝ անմիջական յաջորդ Յովսեփայ. իսկ նորք, ընդհակառակն, Հ. Մէք. Զամ. չեանի հետ հիմունելով ուրիշ պատմական վկայութեանց վրայ, կը կարգեն ընդ մէջ Յովսեփայ և Գտայ, Մելիդէս կամ Մելէտ ոմն յամին 452—456 և զՄովսէս (Ա) յամին 457—464, Այսպէս նաև Գտայ և Յովհ. Մանդակունւոյ մէջ տեղ կը դնեն Քրիստովոր ոմն (Ա) յամէն 475—479: Բաց յաստի՝ կայ ուրիշ շփոթութիւն մ'նս նկատմամբ ամացն, ցորքան վարպեցին զկաթողիկոսութիւնն զիւտ և Յովհ. Մանդակունի: Ստեփանոս Ասողիկ, Բ. գլ. Բ և Յովհան կաթողիկոս և պատմազիր՝ 10 տարի կը հաշուեն կաթողիկոսութեան Գտայ. ըստ Սամուէլի՝ 14 տարի. այսինքն է, յամի Տեառն 470—484. իսկ կիրակոս՝ 15 տարի կը հաշուէ: Ուրեմն անհրաժեշտ հարկաւոր է, ըստ իս, նախ քան զամենայն լուսաւորել տոհմային պատմազրութեան այս կրկին խառնակութիւնքու:

Առ այս զիւտելու ենք, որ Զամէեանին հետեւող եկեղեցական պատմազրաց վերջիշեալ կարծիքն, այսինքն է, որ մէկ կողմէն հաստատուելով առ Ղազարայ գտնուած մէկ տեղւոյն վերայ՝ կը դնէ ընդ մէջ Գտայ և Յովսեփայ՝ զՄովսէս և զՄելիսէս. իսկ միւս կողմէն այլ հիմունելով թովմ. Արծրունւոյ Պատմութեան թ. Դարրութեան մէկ տեղւոյն վկայութեանը վերայ՝ Յովհ. Մանդակունեցիէն առաջ կը դնէ զԲրիստովոր, չկարէ լինել ուղիղ: Եւ յիրաւի, ըստ հաւատարիմ պատմութեան եղիչէի, Յովսեփայ տարուին՝ ի Պարսկաստան

1. Ստեփ. Ասողիկ, Պատմ. Բ. գլ. Բ: Այլէ՝ այլազգ կը գրեն բայց չէ ուղիղ:

2. Յովհան կաթղ. Պատմորիսն: Ասողիկ, Բ. գլ. Բ:— Վարդան, Պատմ. Հայոց:— Կիրակոս:— Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն:

եղաւ յամին 452, իսկ նահատակուիլն յամին 453—454, այս կէտա
առանց տարակուսի է, Ռւստի այժմ՝ կը մնայ գիտել, թէ 452 կամ
454 էն մինչև 465 (որ կը կարծուի, ըստ վերցյիշեալ պատմագրաց,
տարեթիւ կամողիկոսընտրութեան Գոտայ), այսինքն է, 10—12 տա-
րուան միջոցին կարէին արդեօք մի զկնի միւտոյն յաջորդել կարծե-
ցեալ Մելէտն և Մովսէսն, և կնքած լինել իւրեանց մահկանացունն
Բ. թէ իրօք յաշըրդեցին արդեօք, և թէ այսպիսի եղելութիւն մի ի-
ցէ մարթ իրրե պատմական և հիմնաւոր ընդունել.

Առաջին հարցի մասին՝ ես, ըստ ինքեան, անկարելութիւն մի չեմ
տեսներ. որովհետև թէ տոհմային և թէ արտաքին պատմագրու-
թիւնք այլուր ընծայած են մեզ և կ'ընծայեն՝ քան զայս աւելի սուզ
ժամանակի մէջ երկուքէն աւելի անձանց իրարու յաջորդելն և մա-
հը: իսկ գալով երկրորդ հարցմանը, պէտք է ասել, թէ ստուգիւ առ
Հազարայ՝ կ'ըստու այսպէս. «Քանզի յետ կատարման սուրբ Կաթո-
ղիկոսին Յովսեփայ՝ յաջորդեաց զկարողիկոսուրիւն աշխարհին
Հայոց Տէր Մելիսէն, որ էր յազդէն Մանազկերտեցեացն. և զիետ
նորա Տէր Մովսէսն, որ էր և նո՞ւ ի նոյն ազգէ: Եւ ապա ըստ Աստու-
ծոյ տեխութեանն յաջորդեաց զկարողիկոսուրիւն աշխարհին Հա-
յոց՝ Տէր Գիւտ, որ էր՝ ի գաշասէն Տայոց,՝ ի գեղջէն Արակեազ»:
Արդ, Ղազարայ անուամբ մէջ բերուած այս տեղիս եթէ հարազատ
համարինք, ինչպէս համարած է Զամեեանն, այնուհետև ամէն տա-
րակոյս կը վերնայ. այնու զի նա ժամանակակից լինելով և ականա-
տես ոմն՝ շարէր ստել: Սակայն, ըստ իս, կան բանաւոր պատճառ-
ներ, որոնք տարակուսի տակ կը ձգեն այդ հատուածին հարազա-
տութիւնն: Եւ յիրավի, Ա. Եթէ Ղազարայ պատմագրութեան հնա-
գոյն օրինակաց մէջ այսպիսի որոշ Վկայութիւն մի անդուսա ՚ի վե-
րուաւ եղած լինէր, ինչպէս կարէին այնուհետև Յովհան Պատմագիր
կաթողիկոսէն սկսեալ՝ Ասողիկ, Մտեփանոս Օրբէլեան, կիրակոս,
Վարդան, Մատթէոս Ռւտհայեցի և Զահկեցին, Ընդհակառակին, ըզ-
գիւտ համարել իրրե անմիշական յաջորդ Յովսեփայ. այս անհատ-
կանալի կ'երեկի ինձ: Առ Եղիշէի թէպէտ և կը յիշուի ՚ի թիւս ե-
պիսկոպոսացն Արտաշատու նաև և Մելէտ եպիսկոպոս Մանազկեր-
տոյ և, որ բաւական ստից կուտան մ'է. սակայն պարզապէս եպիս-
կոպոսի մի գոյութենէն՝ չէ մարիթ ուղղակի հետեցնել նորա կաթո-
ղիկոսութիւնն, ինչպէս հաւանօրէն ուզել է հետեցնել Ղազարայ մէջ
ձեռք խառնող ոմն. իսկ կարծեցեալ Մովսիսի մի գոյութեան չիք
անդ և ոչ յիշատակութիւն ինչ: Բ. Ղազարէն մէջ բերուած տեղոյն
մէջ իսկ, եթէ ուշի ուշով քննենք, կան պարագաներ, որք կը հակա-

4. Ղաղ. Փարպեցի, Պատմ. Հայոց, Դրուագ Գ. Էջ 333, ապդ. Վենետ-
կոյ 1873:

սակին նմին իսկ Ղազարայ և կը մատնեն իրին խարդախութիւնը. այսինքն է, անդ երկիցս կրկնուած է բացատրութիւնս « Յաջորդեաց զկաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց », միանգամը Մելետի և Մովլասի համար, և միւս ևս Գիւտայ, որոց առաջինը՝ կարելի է փոխառութիւն համարիլ երկրորդին: Դարձեալ դիտելու ենք, որ Մելետեայ ազգանունն՝ աստ բոլորովին տարբեր ձևով, այսինքն է և Մանազկերտեցեացն ո գրուած է, որ համեմատութեամբ յետին ժամանակի կիրառութիւն համարելի է. մինչդեռ իդ գլխոյն մէջ, յէջ 125 ընդհակառակն, Եղիշէին աւելի մերձաւոր ձևով « Մանձկերտոյ » կը գրուի: Գիւտի մասին կ'ըսուի աստ. « Էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեղզայ », զոր ուրիշ պատմագիրներ չեն ճանաչել. մինչդեռ ընդհակառակն կ'ի գլխում, յէջ 352 կ'ըսուի, թէ վանանդայ գաւառի յիդմատց գեղջէն էր. և այս ուղիղ է, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնե՞ր: Գ. Մեր ձեռագրատան գրչագրի՝ մի մէջ, « Ժամանակակր կարողիկոսացն Հայոց » վերնաղըսվ ժամանակագրական ցանկի մի մէջ անմիջապէս զկնի Ս. Սահակայ գրուած է այսպէս. « Տէր Գադ՝ ամս ժէ: Տէր Յովհանն Մանդակունի՛ ժբ: Տէր Բարգէնն Ե: Տէր Սամուէլ՝ Ժ: Տէր Մուշէ՝ Ը: Տէր Սահակ՝ Ժ: Տէր Քրիստափոր (առաջին) Զ », և այլն: Արդ, այս պատուական յիշատակարանով՝ ըստ բաւականին կը պարզուի առաջարկեալ խնդիրն: Եւ յիրաւի, ըստ իս, Գագս այս, զոր կը յիշեն նաև Եղիշէ և Ղազար, ի ժողովն Արաշատու, իրեն եպիսկոպոս Վանանդայ, հաւանօրէն է նա ինքն կաթողիկոսնի թագաւորներէն ոմանց հետ նաև կաթողիկոսաց յաջորդութիւնը ցՍ. Սահակ և ցդիմա նշխարաց արբոց Հափիսիմեանց: Օստի և անդր՝ յետուգայ ձեռք մի՝ ի բաց թողով շարք մի կաթողիկոսաց, յաւելցուցել է միայն ըգկոմիտաս կաթողիկոս՝ Հափիսիմեանց նշխարաց երկրորդ գիւտին և կաթուղիկէի վերայինութեան արարուածով. որուն ապա կը յաջորդէ երրորդ ներքէ մի գրուած, « Ժամանակակր կարողիկոսացն Հայոց » վերնաղըսվ ժամանակագրական ցուցակ մի, սկսեալ ի Ս. Գրիգ. Լուսաւորչէն և կը հասնի մինչև ցՍտեփանոս Բ: Արդ, այս երեք յիշատակարաններու անտարակոյս նոյնպէս երեք այլ և այլ ժամանակաց մէջ գրուած են: Արամին մասը՝ գործ է Ե դարու ապրող գրչի մի. երկրորդը՝ յէ դարու. իսկ վերջին մասը՝ պէտք է որ Ժ դարուն գրուած լինի. որովհետեւ այդ ցանկին մէջ յիշուած կաթողիկոսներէն վերջինը՝ յամին 928 բարձրացաւ կաթողիկոսական աթոռին վերայ, և յամի Տեսան 926 վախճանեցաւ, ըստ վկացութեան Հ. Մկը. Զամեանի:

4. Որ Յանախապատումի հետ կը պարունակէ Ազաթանգեղայ Զ օրինակըն, որուն իրեն շարունակութիւն կը յարի ստորակէտիւ, յէջ 347 « Նշանագիր կարգաց բանեց Եզնեանն Երիցու » և այլն, յորում մի առ մի կը թուէ մեր Արշակունի թագաւորներէն ոմանց հետ նաև կաթողիկոսաց յաջորդութիւնը ցՍ. Սահակ և ցդիմա նշխարաց արբոց Հափիսիմեանց: Օստի և անդր՝ յետուգայ ձեռք մի՝ ի բաց թողով շարք մի կաթողիկոսաց, յաւելցուցել է միայն ըգկոմիտաս կաթողիկոս՝ Հափիսիմեանց նշխարաց երկրորդ գիւտին և կաթուղիկէի վերայինութեան արարուածով. որուն ապա կը յաջորդէ երրորդ ներքէ մի գրուած, « Ժամանակակր կարողիկոսացն Հայոց » վերնաղըսվ ժամանակագրական ցուցակ մի, սկսեալ ի Ս. Գրիգ. Լուսաւորչէն և կը հասնի մինչև ցՍտեփանոս Բ: Արդ, այս երեք յիշատակարաններու անտարակոյս նոյնպէս երեք այլ և այլ ժամանակաց մէջ գրուած են: Արամին մասը՝ գործ է Ե դարու ապրող գրչի մի. երկրորդը՝ յէ դարու. իսկ վերջին մասը՝ պէտք է որ Ժ դարուն գրուած լինի. որովհետեւ այդ ցանկին մէջ յիշուած կաթողիկոսներէն վերջինը՝ յամին 928 բարձրացաւ կաթողիկոսական աթոռին վերայ, և յամի Տեսան

ևոչ Յովսենիայ անմիջական յաջորդ կոչուելուն զվաճառոր և բանաւոր պատճառն՝ այս պէտք է որ եղած լինի, այսինքն է, որովհետեւ ըստ ասելոյ Ա. Խորենացւոյ, Յովսենի էր տեղապահ կաթողիկոսի և ոչ թէ ձեռնադրութեամբ կամուղիկոս։ Դիտելու կէտ մի է և այս, զի այս ցուցակիս մէջ Քրիստոափոր, ըստ կարգի Սահակ Բ. Էն վերջ գծտեղուած է, կամ լաւ ևս Յովս. Մանդակունին դրուած է իրբն անմիջական յաջորդ Գաղայ կամ Գոտայ. և թէ Նորա և Քրիստոափորի (իմա առաջին և վերջին) մէջ տեղ՝ ուրիշ երեք կաթողիկոսներ ետ կան։ Մելիտին բնաւ յիշատակութիւն չկայ. իսկ Մովսէն՝ Ներսիսի Աշոտարակեցւոյ յաջորդ Յովսիաննէս կամուղիկոսն վերջ դասուած է, և ստուգիւ այսպէս ես կը գտնենք առ Աւխտանէսի։

Արդ, այս ոչ այնքան իրբն հին ձեռագիր, այլ անտարակոյս հնագոյն յիշատակարանավս կարելի է որոշել Գոտայ և Մանդակունւոյ՝ ոչ միայն կաթողիկոսընտրութեան, այլ նոյն իսկ կաթողիկոսական ընթացից և մահուան թուականներն եւ ստուգիր Գիւտ, եթէ էր անմիջական յաջորդ տեղապահէն Սահակայ, այսինքն է, Յովսենիայ վայոցձրեցցոյ, պէտք է եղրակացնել, թէ նա յամի Տեառն 452—454 ընտրուած է կամուղիկոս. և յամին 469—477 վախճանած, իսկ Մանդակունին՝ յամի Տեառն 469—474 ընտրուած իրբն յաջորդ Գոտայ, և յամին 481—483 վախճանած։

Հարկ է մեղ կամ այս թուականներս ընդունել իրբն ստոյդ և պատճական, և կամ զրոյ ընծայէ մեղ Սամուէլ՝ ի Ճամանակագրութեան իւրում, և կամ հուսկ ուրեմն Զամշեանէն նշանակուած, թուականներն իսկ որովհետեւ այս վերջնոց ընծայածներն՝ անյարմար են և այլ ընդ այլց ենթագրութեանց վրայ հիմնուած, ուրեմն կը մնայ առաջինը. Յիրաւի, Սամուէլ կը զնէ զընտրութիւն Գոտայ յամի Տեառն 470, իսկ մահը՝ 484. իսկ Մանդակունւոյն ընտրութիւնը՝ յամին 485, և մահը՝ 496, որ անցանէ զանցանէ քան զշափն, եւ իրօք այսպիսի չափազանցութիւն մի նորա գործած հետևեալ ժամանակագրական վրիպակներէն իսկ ակներն կը տեսնուի. այսինքն է, Ս. Սահակայ մահը կը գնէ յամի Տեառն 467 ին, և ընտրութիւնն 417 ին. Քաղկեդոնի ժողովը՝ գրուած է յամին 472. Եփեսոսի թժողովը՝ յամին 462, և առաջինը՝ յամին 438. Մեծին Ներսիսի մահը կը նշանակէ յամին 408, իսկ ընտրութիւնն 870. Սամուէլի այս ժամանակագրական անյարմարութիւնն անտի առաջ եկած կը կարծուին, որովհետեւ Ս. Ներսիսի կաթողիկոսութեան ուղած է ընծայել 34 տարիներ, և ըստ այնմ ուրիշ եղելութեանց մասին ես՝ իսուարած է յուղիղ պղղոտայէն։ իսկ ըստ ժամանակագրութեան Զամշանի, Գոտայ կաթողիկոսընտրութեան թուականն՝ անկանի յամն 465, և մահը՝ 474. իսկ Մանդակունւոյ ընտրութիւնն՝ յամին 480, և մահ նորա 486, դնելով՝ ի միջի Քրիստոափորի կաթողիկոսութեան

Ծ տարիներն ։ Զամիեանէ կարգեալ ժամանակազրական թուականներն, այնքան չեն խոտորիր վերոյիշեալ յիշատակարանի թուականներէն, և նոյն իսկ կարող են ճշմարիտ համարուիլ. սակայն պէտք է ասել, թէ նորա մեզի ընծայած ցանկը քանի մի կաթողիկոսներու մասին՝ տարակուսական է, և թէ սմանց տարբթիւքն՝ այլոց ընծայւած են։ Եւ, ըստ իս, այս անյարմարութիւնքս անտի յառաջ եկած են, նախ զի Զամիեանը՝ Ղազարայ վերոյիշեալ և անհարազատութեան տիպ ունեցող տեղին, Մելիստի և Մովսիսի կաթողիկոսութեան մասին, իրու հարազատ և անտարակուսելի եղելութիւնները ընդունած է. երկրորդ, կարծեցեալ Քրիստափորի Ա. մի մասին՝ թովմ. Արծրունւոյ վկայութիւնն իրրեն ստուգիւ կատարուած իրողութիւնընդունել է, համարելով գնա իրրեւ պատմազիր ոք և դարու, որով և ականատես իրին. որովհետեւ Զամիեանի ժամանակ՝ թովմայի պատմագրութիւնը զեռ ամբողջապէս յայտնուած չէր։ Ուրեմն նոր պատմագրաց Հօրս և Սամուէլի Անեցոյ՝ սոյն անյարմարութիւնքն՝ ևս քան զես կը հաստատեն վերոյիշեալ յիշատակարանի համեմատ արտադրուած մեր թուականներն. որով կը մեկնսուի նաև Վարդանայ մէկ տեղին, յորում կ'ըսուի. « Կէսք՝ ՚ի կողմն Յունաց (այսինքն է յունարամին Հայոց) ասեն զԳիւտ կաթողիկոս, և զՅովհան (Մանդակունի) ՚ի Պարսից, ՚ի Միունք ժամանակի»։ Դիտելով, որ Վարդանն է կէսք ասեն» բառերով՝ զրաւոր հեղինակութիւններ կը հասկանայ, պէտքէ ըսել, թէ այդ կիսոց կարծիքն ևս ամեննեխն տեղի չպիտի ունենար, եթէ իրօք միջանկեալ Քրիստափորի մի կաթողիկոսութիւնն ատոյգ լինէր։

Արդ, Յովհ. Մանդակունւոյ կաթողիկոսընտրութեան և մահուան տարբթիւքը մերձաւորապէս այսպէս սահմանելէն յետոյ՝ աւելորդ չէ ըսել, թէ Ղազարայ Պատմ. գլ. Ղթ. էջ 546, մէկ տեղին կը թուի հակառակի գէթ մահուան թուականին. որովհետեւ Փարպեցին կը ծանուցանէ աստ, թէ սուրբ Հայրապետոս կ'ապրէր տակաւին նոյն իսկ Պերոզի յաջորդին Վաղարշու գահակալութեան առաջին տարին, և թէ երր լսեց Խազաղասէր թագաւորին առ Վահան շնորհած Հայոց Մարգապանուրեան և Սպարապետուրեան լուրն, մանաւանդ թէ նորա պատկազարդ գալրւստն ՚ի Հայս, մեծապէս ուրախացած տայր երգել և սաղմոսել յեկեղեցիս. « Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած և զՏէր յաղբերայն իսրայէլի»։ Իսկ Վաղարշու գահակալութիւնն եղաւ յամի Տեառն 484, Յուլիս 23, ըստ Նեօրդէքէի¹, այս ինքն է, Մանդակունւոյ մահուան թուականին մէկ տարի վերջ։

Սակայն, այսպիսի մի գժուարութիւն կարելի է լուծուած համարել, եթէ գիտենք մէկ կողմէն, որ պարսկական տարբթուածն և ամիս.

1. Geschichte der Perser und Araber, ect. Leyden, 1879.

ներն, ըստ որում հաշուուած են ամբ թագաւորաց նոցա, Հայոց տարեմուտէն տարրեր էին. և թէ Պերողի թագաւորութեան ամբողջ տարիներն ոմանք 27 կը հաշուեն և ոմանք 24, իսկ այլք՝ ընդ Սամուէլի 22, իսկ միւս կողմէն դիտել արժան է, թէ, ըստ Մտեփ. Ասողկայ, Առվասեփայ նահատակութիւնն յամին 454, (Յուլիս 25, 'ի կիւրակէի) հանգիպեցաւ. գուցէ այս ժամանակէն սկսել պաշտօնապէս հաշուած են դուայ կաթողիկոսութեան տարիներն, որուն հետ սերտի միացած էին և Մանդակունուոյն:

Այժմ տեսնենք համառօտիւնորա ծննդեան տարեթիւն, Զամշեա, նի հետ ուրիշներ ևս կաւանդեն, թէ սուրբ Հայրապետս 75 ամեայ հասակի մէջ էր, երբ առաջին անգամ բարձրացաւ Ա. Լուսաւորչայ աթոռին վերայ: Զկարեմ հաւասարեա ասել, թէ ինչ հիմն վրայ հաստատուած է այս ենթադրութիւնս, զի նորա ծերութիւնը միայն յայտնի է մեզ, աս Ղազարայ. իսկ արդ եթէ ստոյգ է, թէ նա յամին 47 և արգէն կը կրէր իւր ուսոց վերայ 75 կլոր տարիներ, պէտք է եզրակացնել, թէ 396ին ծնած լինելու էր: իսկ նորա 75 տարիներուն վրայ յաւելցընելով նաև այն 42 տարիներն, յորս քաջուպէս վարեց նա զկաթողիկոսութիւնը, կ'ունենանք մերձաւորապէս մեծանուն կաթողիկոսի կեանքն և բազմապիսի գործերն արդիւնաւարող 87 տարիներն:

Շարունակելի

Հ. Բ. Արքաթանա

ԱՅՐԻ ՎԱՆԻՑ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՐՄԱՆՈՒՄԸ

Ոչ պատմիչք և ոչ այլ արձանագրութիւնք մեզ չեն յայտներ ըստոգիւ, թէ երբ հիմնուեր է այս մենաստանս. միայն թէ կը հաւասարեն՝ որ Զաքարեանց և Պուշեանց եօթը եկեղեցիները շինելէն առաջ, որ է նախ քան զգի գար, կային անդ կրօնաւորք և Ա. Աստուանածին եկեղեցին՝ յորում կը կարդանք հնագոյն թուական մի 4477, և քան զայն աւելի հնագոյն խաչքանդակներուն վրայ 4465, Արքեաք ով նախ այս տիտափայ տեղերուն մէջ բնակութիւն հաստատեց, ով նախ այս լպրծուն ապառաժներուն մէջ շինեց Աստուծոյ տաճարները, ուր հազիւ որսորդները սողոսկելով կարող էին մտնել. մվարդեօք քրիստոնէական փառաբանութեան արձագանգներով ընդհատեց ծածուկ անձաներուն մշտնջենաւոր լրութիւնը, Պէտք է հաւատալ աւանդութեան և վարդանայ աշխարհագրին խօսքերուն, թէ